

տուրքերը և աւելի փոքր ծախքով է առաջ դր-
նում:

Առ այժմ թէ թագաւորական և թէ բեգերի
պատկան պղնձահողերը գտնուում են 250 վերստ
քառակուսի տարածութեան վրա: Դեռ նորերս
պղինձը այստեղ ծախվում էր 7 ռուբլի, իսկ այ-
ժմ պահանջի համեմատ 14 ռուբլու է հասել:
այսինքն երկու անգամ աւել: Համեմատելով Գան-
ձակի Գետաբէկի կողմած հանքի պղինձի հետ,
տեղիս պղինձը շատ բարձր է դասվում իր ար-
ժանաւորութեամբ: Չէ կարելի չը նկատել, որ
հանքերի մշակութեան համար մեծ արդելք են ե-
ղել սովորական մէծերը:

Այստեղ պղնձահանք ունի, ի միջի այլոց, և
մի հայ Մուսայբէգ Վարագեօզեան ազգանունով
նոյնպէս աջող հանք, որ մեծ ապագայ է խոս-
տանում, բայց գործողութիւնը նրանումն է, որ
նա վերջրած է այդ հողը ինչպէս թագաւորական
հող, և մի միջոց բանեցնելուց և պղինձի երակնե-
րին հասնելուց յետոյ քուրդ քեզերը ընդդիմա-
նում են նրան ասելով, որ այդ հողը իրանց սե-
փականութիւնն է և ոչ թէ թագաւորական: Այն օ-
րից սկսվել է մեծ խռովութիւն, երկու կողմից
ևս մեծ կռիւներ, մինչև անգամ հրացանածու-
թիւններ են եղել: Բեգերը հիմնվում են այն բանի
վրա, որ այդ հողին կից ունեն հողեր, և որպէս թէ
այդ յիշեալ հանքը գտնվում է իրանց սահմանում:
Թէ որքան ճշմարիտ է այդ, մենք չը գիտենք,
միայն երբ այդ գործը շնչելու համար ուղարկ-
ված էին այստեղ պետական կառավարների վար-
չութեան ազնետը և ուրիշ քննիչներ, ինչպէս ա-
ռւում են, բեգերը մեծ կաշառք են տուել զբաղի
ժողովրդից ընտրած այն անձանց, որոնց երդ-
մամբ պէտք էր վիճի կայացնվելը, որին 50, որին
150, որին 300 և 400 ռուբլի, և այդպէս վկանե-
րի մեծամասնութիւնը անցած էր բեգերի կողմը:
Այսպէս թէ այնպէս պ. Վարագեօզեանց ան-
դադար շարունակում է իր այդ գործը, իսկ ար-
դիւնաբերված (Չոհարը) պղնձաքարերը մնում են
երաշխաւորութեան տակ: Թէ ինչպէս կը վերջա-
նայ այդ գործը մենք չը գիտենք: միայն լսած
ենք, որ այդ կաշառատութեան լուրը հասնում
է քննիչների ականջին: ուրեմն յոյս կայ, որ գործը
արդարութեամբ վերջանայ:

Այդ ի հարկէ շատ ցանկալի է, քանի որ
թուրք բեգերը իրանք անկարող լինելով մշակել
այդ հանքերը, այդպիսի խռովութիւններով միմի-
այն երկրի այս հարուստ արդիւնաբերութեան
մշակման առաջին են առնում: Հանքերի արդիւ-

նաբերութեան մէջ հմուտ յոյները ոչինչ չը կա-
րողացան անել, չունենալով դրամադրութիւն, իսկ
թուրք բեգերը աւելի էլ ոչինչ չեն կարող անել,
չունենալով ոչ դրամադրութիւն, և ոչ էլ տեղեկու-
թիւն այսպիսի գործերից: Վերջապէս Չանգեօզե-
րի բեգերը դեռ շատ հեռու են երկրի արդիւնա-
բերութեան մասին մտածելու չնորհից, նրանց
գլխաւոր հարստութիւնը դեռ ևս խանութեան և
հարստահարութեան մէջն է:

Մնում է ցանկանալ, որ ինքը պետական կա-
ւածները վարչութիւնը աշխատի որքան կարելի
է շուտով վերջացնելու առհասարակ այդպիսի
վէճերը, որոնք միշտ անպակաս են եղել, որպէս
զի պղինձի հանքերի արդիւնաբերութեան գործը
արհեստական արդիւնների չը հանդիպէ: Վախա-
նի հանքերը մեծ ապագայ ունեն, և եթէ մի
կողմից կը բացվին լուս. ճանապարհներ, իսկ միւս
կողմից այնտեղ ոտք դրած դրամատերերը բարե-
խոհութեամբ և հմտութեամբ առաջ կը տանեն
գործը, այն ժամանակ անկասկած Չանգեօզե-
րի բնական հարստութիւնները կը բանան այդ յետ-
ընկած երկրի համար հարստութեան մի նոր շը-
ջան:

ՆԱՄԱԿ ԱՆԷՔՍՆԻՐԱՊՈԼԻՑ

Հոկտեմբերի 1-ին

Բարեկիթ երկիրներում առհասարակ սովորու-
թիւն է յարգել և պատել հասարակաց գերեզ-
մանոցները: Լուսաւորված աշխարհի մէջ հասա-
րակաց գերեզմանոցները պահվում են մեծ հակո-
ղութեան տակ, այնտեղ թագաւորում է վերին
աստիճանի մաքրութիւն:

Բայց, գործողաբար, մեղանում այդ տեղերը ոչ
թէ չեն յարգվում, չեն մաքրվում, այլ պղծվում,
քանդվում և անարգվում են:

Երբ 1837 թ. Գիւմրի գիւղը Նիկողայոս I
կայսրի հրամանով քաղաքի փոխվեց—որովհե-
տ որ քաղաքի արևմտեան կողմ գտնվող բարձրա-
ւանդակը լինի հասարակաց գերեզմանոց: Այդ
բարձրաւանդակը չնորհից հայ լուսաւորչական
և հայ-կաթոլիկ հասարակութեան, այդտեղ թաղ-
վեցին քաղաքի ննջեցեալները մինչև 1860 թ. ա-
կանը: Երբ 1860 թ. Բուրը լցվեցաւ ննջե-
ցեալների մարմարաքանդակով—որովհե-
տա որ քաղաքի հարաւային կողմը եղած տափարակ տեղը, և
այդ գետինը չնորհից բացառապէս հայոց հա-
սարակութեան, այդտեղ թաղվեցան ննջեցեալնե-

րը մինչև 1878 թ. ալ, իսկ երբ 1878 թ.
այդ տարածութիւնն էլ ծածկվեցաւ ննջեցեալնե-
րի մահաբճաններով և գերեզմանոցը քաղաքի
մէջտեղ լինելով մեծապէս համարվեցաւ, վեր-
ջապէս քաղաքի արեւելեան-հարաւային կողմը
տրվեցաւ հասարակաց գերեզմանոցի համար, որ-
տեղ և այժմ էլ թաղվում են:

Վերև յիշած գերեզմանոցները, որտեղ այժմ
ննջեցեալ չէ թաղվում, և որոնց տարածութիւնը
մօտ 8000 քառակուսի սաժէն է, այժմ ընկնելով
քաղաքի կենտրոնում, յարմարաւոր և թանգազին
տեղ են ներկայացնում, բայց ցաւալին այն է
որ այդ պատահան եկեղեցապահական հողերը
զաղտնի կերպով անցնում են այս կամ այն
մասնաւոր անձի ձեռքը, որոնք ոչ թէ միայն ձրի
սեփականացնում են եկեղեցապահական հողերը,—
այլ բարբարոսաբար քանդում են ննջեցեալների
կնքված ոսկորները...

Հասարակաց գերեզմանոցները մասնաւոր ան-
ձինք իրաւունք չունեն քանդելու: դա հակառակ է
խղճի, հակառակ է նոյն իսկ օրէնքին և վերջա-
պէս քրիստոնէական կանոնին:

Այդ գերեզմանոցների շարքումն է նաև տեղիս
յունաց և ռուսաց գերեզմանոցը, բայց դա այլ
գրութեան մէջ է, և պահվում է օրինակելի մաք-
րութեամբ: յունաց գերեզմանոցը պարսպապատ,
մաքուր, և վերին աստիճանի հոգատարութեամբ
պահվում է. նրանց գերեզմանոցում կան ջրի ա-
ւաղան և բազմաթիւ ծառեր:

Այժմ հետաքրքիր է իմանալ, որ եթէ մի քրիս-
տոնէական գերեզմանոց այդպիսի մաքրութեամբ
է պահվում—ինչու մի ուրիշ քրիստոնէական հա-
մայրի գերեզմանոցը այդպիսի ողբալի վիճակի
մէջ է, որը ոչ թէ չէ պահպանվում դանաղան
աղտոտութիւններից,—այլ քանդվում է զանազան
մասնաւոր անձերի ձեռքով... Այդ եկեղեցապա-
հական գետինը, որը այժմ արժէ առ. նուազն
40,000 ռ., ապագային կրկնակի կարժենայ, եթէ
հող տարվի, և անուշադրութեան չը տրվի:

Հրուրում ենք տեղիս յաջորդ Աղուսեան
սրբադանի և հողերը կառավարութեան արժ.
անդամների ուշադրութիւնը այս եկեղեցապա-
հան հողերի վրա:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒՅՑ հեռագրում են «НОВОЕ ОБОЗРЕНИЕ»
լրագրին հոկտեմբերի 8-ից հետեւելը. «Բագուի

քերն են, իսկ նրա միակ «պատգորտը»,—նրա
գրիչը...

Փերկեցեք եւրօպական գրականութեան պատ-
մութեան և դուք աւելի կը համոզվէք, թէ ինչ է
մեր ասածի իմաստը:

Այսօր ամբողջ աշխարհը խոնարհվում է Շէկս-
պիրի հանճարի առաջ. բայց այդ նոյն Շէկսպիրը,
«Համէլետ», «Օթելլոյ» և «Լիրի» այդ անմահ
ստեղծագործողը ոչ «ղիպլոմ» ունէր և ոչ «տիտ-
ղոսներ» և գրեթէ նա ինչ էր,—մի հասարակ
ձիւղապահ Ժամ-Ժալ Բուսօ, անցեալ դարու
այդ հանճարեղ մտածողը, մի գուռնի աշխերտ:
էր: Ամերիկայի ամենամեծ պարծանքներից մէկը,
Բենիամին Տիւրանիլը, մի խեղճ գրաւար էր, և
այն և այլն Վերջապէս ինչու ենք հեռու
գնում: Վերջերք մեր գրականութիւնը. միթէ մի
նշանաւոր գրողները մեծ մասամբ «անյայտ»,
«անպատգորտ» և «անղիպլոմ» մարդիկ չեն:

Մենք ուրիշ շատ օրինակներ կարող ենք բե-
րել, ցոյց տալու համար, որ գրելը—երբեք չէ
կախված ոչ տիտղոսներից և ոչ էլ որ և է զիպ-
լօններից, բայց բաւականաճառ ենք դրանով,
քանի որ լուս. գիտենք, որ «Արձագանքի» զիպլո-
մաւոր գրողները անգիր արած կը լինեն գրակա-
նութեան այդ տեսակ ճշմարտութիւնները, որը
անգիր արած էլ պահում են իրանց գլխում, ա-
ռանց նոցա պատուաստելու կեանքի մէջ տեղի
ունեցող երևոյթներին:

Մեր հակառակորդները գուցէ մեզ կը նկատեն.
«ուրեմն դուք հերքում եք գիտութիւնը, և չէք
ընդունում գիտութեան նշանակութիւնը»:—Փա-
լիցի. մենք խոնարհվում ենք գիտութեան առաջ.
գիտութիւնը մեր հաւատն է, և մենք ուրախու-
թեամբ հրապարակով կը խոստովանենք մեր
տգիտութիւնը, եթէ մեզ կապացուցանեն, որ
մենք մեղանաւում ենք գիտութեան այս կամ այն
կէտի դէմ: Բայց միթէ դուք կարծում եք, պա-
րոններ, որ գիտութիւնը միայն նրա արտօնու-
թիւնն է, ով իր ձեռքում ունի մի որ և է

ճանապարհի վրա, Ալի-Կարուում Նոյա Կայսե-
րական Մեծութիւններին ներկայացան պատգա-
մաւորութիւններ Լէւկօրանի, Շամախու և Գեօլ-
յայի գաւառների կողմից, և ներկայացրին ի մի-
ջի այլոց արձաթի տակաւոյ մէջ խաւար: Հոկ-
տեմբերի 9-ին թագաւոր Կայսրը զօրահանդէս
կատարեց. Շիրվանի գնդի շէֆը նշանակվեց թա-
գաւառապետ: Ժամը 3-ին Նոյա Մեծութիւննե-
րը այցելեցին Նօրէլի գործարանը, և ապա Բա-
լխանի նաւթահորերը: Ժամը 5 1/2-ին Օդոստա-
փաւ Հիւրերը վերադարձան Բագու, որտեղից
գիշերը կուղևորվին Վարախադ:

Նոյա Կայսերական Մեծութիւնների վճարկաւ-
կաւ եղած ժամանակ, սեպտեմբերի 20-ին, ինչ-
պէս դրում է «Астраханский Листок» լրագիրը,
բաղդ ունեցաւ թագաւոր Կայսրի, թագուհու
Կայսրուհու և թագաժառանգի կողմից ունեց-
գրութեան ընդունվել Աստրախանի թեմի առաջ-
նորդ Գեորգ եպիսկոպոս Սուրենեան: Մի և նոյն
օրը նորի սրբադնութիւնը, որի վերջապիւ
անձինքների թիւում արժանացաւ Բարձրագոյն
ճաշի հրաւիրվելու:

Մեզ հաղորդում են, որ Աղափեռեան Գրիգոր
եպիսկոպոսը, որ Վեհափառ Կաթողիկոսի հետ
Թիֆլիս էր եկել, արդէն վերադարձաւ իր վանա-
հայրութեան տեղը՝ Վ. Ագուլիս, իսկ Վեհափառի
հետ գուցէ Բագու կերթայ Թիֆլիսի առաջնորդ
Արիստակէս եպիսկոպոս Սեդակեան:

Տեղական ռուս լրագիրները հաղորդում են, որ
Երեք հողի անդլիացի ճանապարհորդներ, որոնք
քանի մի ժամանակ առաջ Սլանեստայի ձիւնա-
պատ սարերի վրա էին բարձրացել, իսպառ ան-
հետացել են: Մեծադրում են, որ նրանք կործան-
վել են բարձր սարերի ձիւների մէջ:

Պետական կառավարները միմիայն Օստրովկի,
ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրնե-
րը, ներկայացրել է պետական խորհրդին մի նա-
խագիծ Թիֆլիսում շերամապահական կայարան
հիմնելու մասին:

Մարաբաղաքի լրագիրները հաղորդում են, որ
աւստրիական Պրագա քաղաքում բացվում է
ռուսաց մուշէյ: Այդ մուշէյի նպատակն է
շօշափելի կերպով պատկերացնել ռուսաց կեան-
քը, որի հետ չէինք շատ վատ են ծանօթ, չը

«ղիպլոմ»:

Ձեր կարծիքով զիպլոմը—գիտութիւն է. զիպ-
լօնից դուրս գիտութիւն չը կայ: Դուք հաւա-
սում եք աւելի զիպլոմին, քան գիտութեան,
կարծում եք զիպլոմը այն վերջնական չափն է,
որը տրվում է միշտ կը տրվի մարդկանց, իբրև
նրանց զարգացման և ընդունակութեան նշան:
Բայց ներեցեք, այդ շատ հնացած միտք է. այժմ
արեւայտութիւն մտնելու համար այլ ևս պակից
«ինդուլգենցիա» չեն առնում...

Եւ վերջապէս ինչ իրաւունքով դուք պահան-
ջում եք, որ մենք խոնարհվենք ոչ թէ մարդկանց
տաղանդի և ընդունակութեան առաջ, այլ նոցա
«պատգորտների» և «ղիպլոմ» առաջ, այն էլ մի
այնպիսի ասպարիզի վրա, ինչպէս մասնաւոր
և գրականութիւնն է, որի շուրջը մաքրանքներ եր-
բեք չէ կարելի հիմնել, և որի մուտքը աղատ է:

Դուք դուր եք կարծում, որ ներկայ ժամանա-
կում մենք պատրաստ ենք խոնարհվելու ամեն մի
ղիպլոմաւորի առաջ, որոնք ցոյց տալով հասարա-
կութեան իրանց «ղիպլոմը», ոչ թէ միայն «Կիտուք
և պատիւ» են պահանջում, այլ և ուզում են դեր
կատարել մտաւոր գործունէութեան ասպարիզում,
աշխատելով կուրացնել ժողովրդին նրանով՝ «թէ
մենք միայն կարող ենք լինել քաղաքակրթու-
թեան կարապետները»:

Ոչ, պարոններ, մենք հեռու ենք այդպիսի
ստրկական ոգի ունենալուց:

Աղատ են այդ տեսակ «պատգորտաւորները»
իրանց անձնաւոր և կաւրի ստաւկան
ձգտումները մէջ, բայց դուք է աշխատում
«Արձագանքի» պ. խմբագիրը՝ իր մէջքը
պնդալու և իւր համար՝ ասպարիզը յատկացնել
այդ տեսակներին միայն, յետ մղելով նոցա,
որոնք ոչ մի կերպ չեն ընդունում խառնութեան
գրականութեան մէջ, և մտաւոր գործունէութեան
ասպարիզում հեղինակութիւնը չեն չափում մարդ-
կանց փողով, պաշտօնով և ունեցած դիրքով...

(Կը շարունակվի)

պատճառը.—արդեօք Բագուի թաղումն է այդ,
որ գրգռեց «տասն և չորս տարի իր ոյժերը ազ-
գի ծառայութեան նուիրած» (տես «Արձագանք»
№ 23) մարդու փառասիրութիւնը, արդեօք դա
պատճառը այն դատարկութիւնն է, որ նկատ-
վում է «տասն և չորս տարվայ» գործունէութեան
ճանապարհի վրա, թէ վերջապէս այդտեղ մի ու-
րիշ պատճառ կայ, այդ մենք չենք քննի, և դրա
քննիչը թողնում ենք «Արձագանքի» հրատարակչի
մօտիկ գործակիցներին...

Մենք միայն մի բան ենք յիշում, այդ այն է,
որ «արջը օրհասականը հորատողն էր կուրի», մենք
միայն մի բան ենք տեսնում, այդ այն է, որ
պ. Բովաննինսեանի օրգանը մի գլուխ խնդ-
կատակութիւններ է անում, թէ և այդ բոլորը
ոչինչ կապ չունի ոչ «Արձագանքի» անգոյն դը-
րութեան հետ, ոչ Ներսիսեան դպրանոցում ա-
պաստան գտած անպէտք վարժապետների հետ,
ոչ հայոց եկեղեցու ֆինանսական պատմութեան
մէջ արդէն երկաթէ տառերով արձանագրված ե-
րեցիկութիւնը մաքաւ հայկերէնի հետ, ոչ
խղճով հայ մամուլի առաջադիմութեան հետ, և
ոչ էլ վերջապէս մեր աշխարհաբարի մշակման
հարցի հետ...

Սակայն չը նայած այդ պարզ ճշմարտութեան,
և չը նայած այն բանին, որ «Արձագանքը» ի-
րան տպագրական խօսքի նախանձանդիր է
հանդիսացնում, այնու ամենայնիւ, մի քանի ամսից
ի վեր այդ շարաթիւթերը չէ կարողանում
ստանաւորել լինել և խեղը գլուխը հաւաքել:
Նա մեզ հետ վիճում է ընդունաբանական հարցի
մասին, և փոխանակ ընթերցողին՝ փաստեր տա-
լով, ամեն մի տողից յետոյ դառնում է մեր անձ-
նաւորութեանը, և մեր հասցէին ուղղում է այս-
պիսի բառեր. իմաստակ, տգէտ, թերուս, կեղծ,
գիտութեան այլուրեքին անծանօթ, սեմինարիստ,
տղայ, տաւա և այլն. (տես «Արձագանքի» վեր-
ջին համարները): Նոյն «Արձագանքը» ընդհանրա-
պէս «Մշակի» մի քանի աշխատակիցների անձ-

նաւորութիւնը շօշափելով, այնպիսի բառեր է
գործածում նոցա հասցէին, որ՝ մենք ամառում
երբ այստեղ առաջ բերել, որովհետեւ այդպիսի
բառեր «Արձագանքի» համարող էջերի վրա՝ մի-
այն կարող են երևալ: Հետաքրքրողը թող հաւ-
բերութիւն ունենայ թերթը «Արձագանքի» հա-
մարները, սկսած № 22-ից:

Բանը նրանումն է, որ բոտինիական շարաթիւ-
թիւթի աններելի վարմունքը միմիայն այդ և դո-
րա նման հայտնաբերները չեն.—նա մի աւելի ան-
ներելի դիրք է բռնում. նա թող է փչում, նա
ուզում է մի տեսակ գրական մօնօպօլիտ
ստաբիլ, թող տալով, որ այդ մօնօպօլիտայից օգտ-
վին իր արարանակ գրողները: միայն: «Ար-
ձագանքին» դուր էլ գալու, երբ գրականութեան
և մամուլի մէջ հանդէս է գալիս մի նոր մարդ,
մի նոր գրող:

Եթէ գրականութիւնը այժմ էլ, ինչպէս միջին
դարերում, «ընտրեալներին» սեփականութիւն մի-
այն լինէր, գուցէ հասկանալի լինէր մեր բոտինի-
ականների բռնած դիրքը: Բայց ներկայ ժամա-
նակում գրական «մօնօպօլիտ» ստաբիլ տակ
քան անմտութիւն է:

«Արձագանքը» գրելը համարում է մի այնպիսի
փեշաւ, որի համար անպայման պէտք է ունենալ
տիտղոս և զիպլոմ: Մենք հասկանում ենք
«ղիպլոմի» և «տիտղոսների» անհրաժեշտութիւ-
նը, երբ մարդիկ գրել են ուզում ստանալ, երբ
մարդիկ աստիճան և պաշտօններ են ուզում
ունենալ, բայց մենք չենք կարողանում հասկա-
նալ, թէ ինչ նշանակութիւն ունեն «տիտղոսը» և
դանազան «պատգորտները» գրականութեան մէջ,
որտեղ ամեն բան հիմնված է մտաւոր ընդունա-
կութեան վրա, որի համար աշխարհը իր դոյու-
թեան օրից սկսած չէ կարողացել ստեղծել ոչ
մի տեսակ «պատգորտ», ոչ մի տեսակ «ինդու-
լգենցիա», և երբեք չէ էլ կարող ստեղծել:
Գրականութեան մէջ միակ «ղիպլոմը» գրողի
ստեղծագործութիւնները և նրա յայտնած մըտ-

գէշ և Պաւլէ Ալեքսանդրովիչները և Մեծ իշխա-
նուհի Նիկոլայեւնա Գեորգիւնայ աշտօր կէս գիշե-
րին հասան աշտօնող. կայարանում Նոյնը դիմա-
ւորեցին խնդրել, մինիստրները, հիւպատոսները,
գնդապետ Տուրնէր, — բոլորտանական զօրքի հրա-
մանատարի տեղապահը, — գնդակալ Գրեյֆէլ, գե-
ներալներ և ազնուականները: Թնդանօթածգու-
թեամբ ողջոյն տրվեցաւ: Փողոցները լի էին ժո-
ղովրդով, որը ուրախութեամբ ողջունում էր Նո-
յն Բարձրութիւններին: Վաղը խնդրվի մօտ ճաշ
կը լինի 80 մարդու համար:

ՓԱՌԻՑ, 8 հոկտեմբերի: Անցեալ գիշերը Հալ-
բուրգում պոկված էր գերմանական հիւպատոսարանի
նշանը, որը յետոյ գտնվեցաւ փողոցում, ցեխոտ-
ված: Պրէֆէկտի օգնականը իսկոյն եկաւ գերմա-
նական հիւպատոսի մօտ և ցաւակցութիւն յայտ-
նեց նրան պատահածի մասին:

ՊԵՏԵՐԲՈՒԴ, 8 հոկտեմբերի: Ս. Պետերբուրգի
բօրսա. Թիֆլիսի և Գուրայի կալուածական
բանկերի գրաւական թղթերը — 97 ր. Թիֆլիսի
քաղաքային կրէդիտական ընկերութեան օրվա-
ցիւնները 81 րուբլի:

ԲԱՅՈՒՆ, 9 հոկտեմբերի: Երէկ, կէսօրից յետոյ,
ժամը 1-ին, Նոյն կայսերական Մեծութիւնները
ժամանեցին Բաղու. Նոյն Մեծութիւններին կա-
յարանում դիմաւորեցին նախնայի իշխանութեան
ներկայացուցիչները. քաղաքապետը ներկայա-
ցրեց աղ ու հաց. նա և նահանգապետի ամուսնի-
նը ներկայացրին կայսրուհուն շքեղ փնջեր: Դէպի
պալատը գնալիս, երբ բազմութիւնը ոգևորու-
թեամբ ողջունում էր Օդեսայի և Զիւրիքի,
Նոյն Մեծութիւնները այցելեցին հին բերդի մէջ
գտնվող եկեղեցին, որի դրան մօտ դիմաւորեց
Նոյն Մեծութիւններին վրաստանի էկզարխ
Պաւլազի: Պաւլատ գնալուց յետոյ տեղի ունեցաւ
բազմութիւն պատգամաւորների ընդունելութիւնը,
որոնց թիւում և Անդրկասպեան երկրի թուրքմեն-
ների պատգամաւորութիւնը, առաջնորդութեամբ
գնդապետ Կոմարովի և գնդապետ Ալեքսանովի:
Թուրքմենների պատգամաւորութիւնը շտաբում
էր իր զգեստների շքեղութեամբ: Պատգամաւոր-
ների թիւում էր գտնվում Մերլի խանի յայտնի
կինը, որը 1884 թվին յորդորում էր իր ցեղին
հպատակելի Ռուսաստանին: Մի փոքր յետոյ Նո-
յն Մեծութիւնները ներկայ եղան առաջին ուղ-
ղափառ տաճարի հիմնարկութեան: Առաջին քարը
իր ձեռքով դրեց թագաւոր կայսրը:

ԲԱՅՈՒՆ 9 հոկտեմբերի: Երէկ Նոյն կայսերա-
կան Մեծութիւնները դիտեցին մօտիկից անցնող
քաղաքները, որը բաղկացած էր բնականօրէն ուղ-
աներից, ջրերից, էջերից և պարսկական ու թրք-
քական սաղերից: Երեկոյեան ամբողջ քաղաքը
լուսաւորված էր և հրախաղութիւն կար Նոյն
Մեծութիւն թագուհի կայսրուհին, թագաժամանակի

և Մեծ իշխան Գեորգի: Ալեքսանդրովիչի հետ բա-
րենաճեց այցելել կրակապատերի կռատունը.
յետոյ Նոյն Մեծութիւն թագուհի կայսրուհին
բարենաճեց ընդունել Բաղուի նախնային ընկերու-
թեան կառավարիչ Բաղուի առաջարկած թէ-
յը, որի ժամանակ տրվին Բաղուի ներկայա-
ցրեց թագուհի-կայսրուհուն մի փունջ, իսկ թա-
գաժամանակը բարենաճեց ընդունել իրան ներկա-
յացրած շքեղ ալբոմը: Սուրբախանի նախնային
հանքերի տեսարաններով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴԻ ԲՈՐՍՍ

Հոկտեմբերի 7-ին			
Լճիկների վրա 10 ֆունտ արծէ.	93 ր. 35	>	
Համբարդի վրա 100 մարկ —	45 > 60	>	
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36 > 55	>	
Ոսկի — արծէ —	7 > 53	>	
Մաքուրային կուպոններ —	150 > —	>	
Արծաթ —	1 > 13	>	
Բօրսային դիվիդենդներ —	7 > 8 1/2	>	
Պետական բանկ. 5 1/2 տոմս 1-ին շրջանի	98 > 25	>	
— — — — — 2-րդ —	98 > 12	>	
— — — — — 3-րդ —	96 > 50	>	
— — — — — 4-րդ —	97 > 25	>	
— — — — — 5-րդ —	97 > 25	>	
— — — — — 6-րդ —	— > —	>	
Նոր 4 1/2 փոխառութիւն —	96 > —	>	
Արեւելեան 5 1/2 փոխառութիւն. 1-ին շրջ.	96 > —	>	
— — — — — 2-րդ —	95 > 62	>	
— — — — — 3-րդ —	95 > 75	>	
Ներքին 5 1/2 առաջին փոխառութիւն.	262 > 50	>	
— — — — — երկրորդ —	237 > 50	>	
5 1/2 1/2 րէնտա —	101 > 75	>	
Ոսկեայ րէնտա —	171 > 12	>	
Եօթերորդ կոմսոլիգած փոխառու- թիւն —	144 > —	>	
Նոր երկաթուղային րէնտա —	96 > 37	>	
5 1/2 փոխառական թղթեր կալուած.	— > —	>	
փոխ. կրեդ. ընկ. մեծ —	147 > —	>	
— — — — — թղթաւ. —	90 > 50	>	
Գրաւ. թղ. Ալեք. բանկի —	— > —	>	
5 1/2 փոխառական թղթեր խորանի կալուած բանկի —	97 > —	>	
6 1/2 փոխառ. թղ. Խարկովի կալ. բան. —	100 > —	>	
— — — — — Պոլտավայի —	99 > —	>	
— — — — — Պետ. Զուրկ. —	98 > 50	>	
— — — — — Կիւնի —	100 > —	>	
— — — — — Մոսկովայի —	100 > —	>	
— — — — — Բեսարաբ. Զաւր. —	99 > —	>	
— — — — — Նիժ. Սաւար. —	100 > —	>	
— — — — — Վիլնայի —	99 > —	>	
— — — — — Թիֆլիսի — 2 1/2 և 4 1/2 տ. —	— > —	>	
— — — — — փոխառութիւն — 18 և 4 1/2 տ. —	— > —	>	
Վճարված-կապալի բանկի ակցիաները	647 > —	>	
Ռուսաց երկաթուղիների ակցիան. ընկ.	229 > —	>	
Բրեյնսկ-Բոյոսովի ընկ. —	81 > —	>	
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա- ցաքիւններ —	92 > 25	>	
Մոսկովայի քաղաք. օրվաքիւններ —	92 > 50	>	
Օղէկային —	91 > 75	>	
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. —	— > —	>	
Ս. Պետերբուրգի բօրսայի արտադրութիւնը ամուր է:	— > —	>	

Խաղաղութիւն-հրատարակող ԳԻՏԻՆՈՒ ԱՐԺՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ւ Ի Ն Ն Ե Ր

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԱՐԻՍՏՈՐԱՄ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ
ՌՈՒՍԵՐԻՆԻՑ-ՀԱՅԵՐԻՆ ԲԱՐԻՐԻՔ
ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Գինն է 3 րուբլի, ճանապարհի ծախսը գնողի վրա է:

Միանուագ քսանից աւելի գնողին զիջումն կը լինի:

Վաճառվում է ԲԱՅԱՌԱՊԵՍ Խիդիկէլի և ընկ. զբաղմունքներով, Թիֆ-
լիս, Գօլովինսկի Պրոսպեկտ, առաջին փոխադրային հանդէպ: 6—40

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուրբաթ, 14 (26) հոկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻՑ շուրս կը գնայ շոգեհաւ CAMBOGE
(ԿԱՄԲՈՋ) նաւապետ PAUL (ՊՈԼ) մանկով Կ. Պոլիս, Զմիւռնիա և Սիրա:
Ազնանները ԲԱԹՈՒՄԻՄ Կ. Գ. ԷՍՄԵՆՃԵՐ, իսկ Թիֆլիսում ԳԻՏԻՆՈՒ ՀԵՋՈՒԲԵՆ
ՀԵՋՈՒԲԵՆ:

1—2

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ

Վարչութիւնը պատիւ ունի խոնարհաբար խնդրելու պ.պ. անդամներին շնորհ բերել
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ, որը կը լինի ներկայ հոկտեմբերի 23-ին, առաւօտեան 12
ժամին, Նազորնայա փողոցի վրա, պ. Եսայի ֆիլոսոֆի տանը: 1—2

ԽԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԼԻԻ ՄԷՋ ԽՇՇՈՑ

Ինչպէս աղատել այդ ցաւից: Պէտք է նամակով դիմել բացատրութիւններ պա-
հանջելու համար, ֆարիզ, պ. Նիկոլայեւնա, հետեւալ հասցեով. Парижъ (Франція)
Nicolson, rue Drouot, Paris. 1—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱՍԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, հոկտեմբերի 13-ին, ԱՆԱՏՈԼԻԱ (ANATOLIE) շոգեհաւ, նաւապետ
ԲՕՇԵԼ (BOSCHEL) շուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն,
Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւններ մասին պէտք է դիմել ընկերութեան
գործակալներին. Բաթումում Լէօնիդովի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում Նախիկ Ար-
ժուհի գալիքէտմ, № 103. 3—3

Ցանկանալով հրատարակել հանգուցեալ ինժեներ Պետրոս Պետրոսեանի կազմած
և անտիպ մնացած «ՀԱՅԵՐԻՆԻՑ ՌՈՒՍԵՐԻՆ» ԲԱՌԱՐԱՆԸ, որի տպագրութիւնը ահա-
գին ծախք է պահանջում դիմում եմ զլուսաւորապէս հանգուցեալի ընկերներին,
խնդրելով որ օգնեն ինձ այդ կարեւոր ձեռնարկը բաժանորդա գրութեամբ լոյս
ընծայելու: Բաժանորդագրինք մինչև լոյս ընծայելը կը լինի 4 ր. իսկ լոյս տեսնելուց
յետոյ 6 րուբլի: Բաժանորդ գրվել կարելի է Թիֆլիսում «Կենտրոնական» և «Միջա-
յեկան» գրաքանութաններում, և ինձ մօտ: Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն
հետեւեալ հասցեով. Тифлисъ. Артемию Петросяну, Михайловская ул. д. № 102.
Զ. Պետրոսեան 2—3

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

Որ աւարտել է Պետերբուրգի ուսուցչական ինստիտուտում և մի քանի
տարի կատարելագործվել է արտասահմանում ՉԱՓԱՌՈՐ ԳՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ԳԻՏՈՒԹԱՆ, ԲԵԱԿԱՆ ԵՒ ԲՈՒՐ ՌՈՒՍԻԱՆԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ:
Նա պահում է և ԳԻՏԵՐՈՒԿՆԵՐ (պատմ. օճիկ) և նախընթերցի:
Ցանկացողները թող դիմեն ՏԵՐ-ՅԱԿՈՎԵԱՆՑԻՆ. Тифлисъ. Большая
Банкская улица, д. № 3. 3—7

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆԵՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՑԻՆ ԵՒ ԳԱՋԱԾԻՆ ՋՐԵՐԻ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ
ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Յերկօղնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գետնովում է Լօբկօ և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից փերա
նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ժԱՄԱ
ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԱՆ բոլոր ՊԱՀԱՆՔՆԵՐԻՆ, ջրերի պարաստութեան փերաբերումով:
Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԻՄԻ ԲԻ ՊՐՈՎԻԺՈՐԻ, որ փորձառու
թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեւի մեքենաներ,
նոյնպէս և ջրվիշի հաշակարար ՖԻԼՏՐԸ, որը միակ է, որ աշորութեամբ մաքրում է ջրերը կապա-
րից, կրից, երկաթից, օրգանական, մինեալական մասնիկներից ու աղերից և դերազանցում է բոլոր
միւս ֆիլտրներից իր մեքենայական և քիմիական գործողութեամբ:
Պրովիժորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Շնորհով այն օ-
ժանդակ միջոցների, որ տալիս է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիշդում, այսուհետեւ իմ
գործարանում կը պարաստվին, բացի դէպքերից, մրցային և դադային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱ-
ԿԱՆ ԲՈՒՆԱԿԱՆ ՋՐԵՐԸ, ինչպէս օրինակ՝ Վիշի, Էմսի, Կարլսբադի, Մարիենբադի ջրերը, լու-
ծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների առած կա-
նոններին: Արուեստական մինեալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշա-
կար բժիշկները, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դե-
րազանցութիւններ. նրանք կարող են միայն թաքմ գրութեան մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամա-
նակ պարունակելով իրանց մէջ ածխածին գազերի աւելի մեծ քանակութիւն, այդպիսով աւելի ա-
խորժելի դառնալով խմելու համար և աւելի շուտ ներգործելով հիւսնը կազմուածքի վրա:
Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաք-
րութեան մէջ և վերաբերվել դէպի գործս ամենամեծ ճշգրտեամբ և բարեխղճութեամբ, որի մասին
յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:
Տարածաշրջաններից խուսափելու համար, խոստահարաւ խնդրում եմ իմ ջրերի գործածող-
երին պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ
գործարաններ կարող են չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ

39—50 (Ե)

ԿԵՐԼԵՐԵԱՆ ՀԵՂՈՒԿ

ԲԱՂԼԻՆՔՆԵՐԻ ԵՒ ՈՒՏԻՃՆԵՐԻ
ԳԻՄ

Լինելով միակ և անպայման արմատական, մի և նոյն ժամանակ ամենաժամանակ և ամենքին
մատչելի միջոց այդ միջոցների դէմ, ծախվում է կատարեալ երաշխաւորութեամբ յայտնի
ֆիրմայի

Բ. ԿԵՐԼԵՐԻ և ԸՆԿ., Նիկոլայայա փողոցում:

Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր վաճառականների մօտ:

№ 12. Մ. Կ. Օ. (2—3)